



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

---

1959 · 50 · 2009

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄՏԵՓԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(Գանգատ թիվ 45081/04)*

ՎՃԻՌ

ՄՏՐԱՍԲՈՒՐԳ

27 հոկտեմբեր 2009

**ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ**

*27/01/2010*

*Սույն վճիռը կարող է ենթարկվել խնդրագրական փոփոխությունների:*

**Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի գործում**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Elisabet Fura,

Corneliu Bîrsan,

Boštjan M. Zupančič,

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Luis López Guerra, *դատավորներ,*

և Stanley Naismith, *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2009թ. հոկտեմբերի 6-ին կայացած դռնփակ նիստում,

Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Գործը սկիզբ է առել 2004թ. դեկտեմբերի 7-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի քաղաքացի պրն. Ստեփան Ստեփանյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 45081/04 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին Լոնդոնում գործող Մարդու Իրավունքների Քրդական Ծրագրի (KHRP) փաստաբաններ պրն. Մ. Մյուլլերը, պրն. Թ. Օթթին, պրն. Ք. Յիլդիզը, տկն. Ա. Սթոքը և տկն. Լ. Քլարիջը, և Երևանում գործող փաստաբան պրն. Տ. Տեր-Եսայանը: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2008թ. հուլիսի 9-ին Երրորդ Բաժանմունքի նախագահն որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Դատարանը որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

4. Գիմումատուն ծնվել է 1951թ. և ապրում է Հայաստանի Արտաշատ քաղաքում: Նա Ազգային Ժողովրդավարական Կուսակցության (ԱԺԿ) անդամ է: Նա նաև այդ կուսակցության ներկայացուցիչն է ՀՀ Արարատի մարզում:

#### *1. Գիմումատուի պնդմամբ իրեն պատճառված անհանգստությունը և քաղաքական հետապնդումը*

5. 2003թ. ՀՀ-ում անցկացվեցին նախագահական ընտրություններ առաջին և երկրորդ փուլերով՝ համապատասխանաբար փետրվարի 19-ին և մարտի 5-ին: Գիմումատուն ներգրավված էր հիմնական ընդդիմադիր թեկնածուի համար տարվող աշխատանքներում և նրա պարտականությունների մեջ էր մտնում քվեարկության ընթացքի վերահսկումը: Գիմումատուն պնդեց, որ ընտրություններից հետո նա պատրաստել է հաշվետվություն տարատեսակ խախտումների վերաբերյալ, որոնք ենթադրաբար տեղի էին ունեցել ընտրությունների ժամանակ, բայց ՀՀ կառավարության և Արարատի մարզի բարձրաստիճան պաշտոնյաները պահանջել են չիրապարակել հաշվետվությունը, որը նա մերժել է:

6. Գիմումատուն այնուհետև պնդեց, որ 2003թ. փետրվարից մինչև իր ձերբակալումը՝ 2004թ. մայիսի 20-ին, իրեն շարունակաբար հետապնդել են իր քաղաքական գործունեության համար: Մասնավորապես, ոստիկանությունը հաճախակի կանչել է իրեն տարածքային ոստիկանության բաժին առանց որևէ պատճառի և պահանջել, որ նա դադարեցնի իր քաղաքական գործունեությունը: Այնուհետև, 2004թ. ապրիլի 9-ին դիմումատուի որդին ձերբակալվում է և ենթարկվում է վարչական տույժի ոստիկանության աշխատակցի օրինական պահանջներին չենթարկվելու և զազրախոսելու հիմքով: Ի վերջո, 2004թ. ապրիլի 10-ին տեղի ունեցած գլխավոր ցույցին մասնակցելու օրվանից մինչև 2004թ. մայիսի 19-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության աշխատակիցներն ամեն օր, ժամը 5-ից մինչև ժամը 9-ը, այցելել են իր տուն՝ պահանջելով բացահայտել իր գտնվելու վայրը: Այս գործողությունների արդյունքում նա ստիպված էր հեռու գտնվել իր տանից: Գիմումատուն վերադարձավ տուն միայն 2004թ. մայիսի 20-ին այն բանից հետո, երբ, ի պատասխան իր բողոքի, Մարդու իրավունքների պաշտպանը ենթադրաբար հավաստիացրել էր, որ ոստիկանության աշխատակիցների այցելությունները կդադարեն:

## 2. Վարչական վարույթը դիմումատուի նկատմամբ

7. 2004թ. մայիսի 20-ին դիմումատուն բերման ենթարկվեց ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն: Անձին բերման ենթարկելու մասին արձանագրության համաձայն՝ դիմումատուն բերման է ենթարկվել ոստիկանության վարչություն երկու աշխատակիցների կողմից ժամը 13-ն անց 15-ին՝ ոստիկանության աշխատակցի օրինական պահանջները չկատարելու և զագրախոսելու համար:

8. Ոստիկանության վարչությունում դիմումատուի նկատմամբ հարուցվեց վարչական վարույթ: Ձերբակալությունն իրականացրած ոստիկանության աշխատակիցներից մեկը զեկուցագիր ներկայացրեց ոստիկանության պետին, որտեղ նշված էր.

«Մայիսի 20-ին ժամը 13:00-ին [մենք] եղանք Արտաշատ քաղաքի Խարազյան փողոցի 26 շենքի բակում, որտեղ նույն շենքի 55 բնակարանի բնակիչ [դիմումատուն] բարձր ձայնով խոսում էր մի անձանոթ տղամարդու հետ: Մենք մոտեցանք և պահանջեցինք, որպեսզի [դիմումատուն] ցածր խոսի և չխախտի հասարակական կարգը: Այդ լսելով՝ [դիմումատուն] թողնելով այդ անձանոթին դարձավ մեզ և նույն ձևով մեզ հետ խոսեց՝ ասելով. «Ձեր ինչ գործն է, թե ինչ ձևով եմ ես խոսում: Բավական է դուք ձեր քիթը խոթեք ամեն տեղ և յազվություն անեք»: Մենք փորձեցինք վերջինիս հանգստացնել, սակայն նա շարունակում էր մեզ անպատվել և մեր հասցեին ասել անպատիվ խոսքեր: Այդ ամենը տևեց շուրջ հինգ րոպե, որից հետո նա բերման ենթարկվեց ՈԱՄ վարչություն»:

9. Անձին բերման ենթարկելու մասին արձանագրություն կազմվեց, որում նշվեց, որ դիմումատուն «չի կատարել ոստիկանության աշխատակցի օրինական պահանջները և զագրախոսել է», որը հանդիսանում է զանցանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ՎԻՎՕ) 182-րդ հոդվածի իմաստով: Նշվեց նաև, որ դիմումատուն հրաժարվել է որևէ ցուցմունք տալ: Այս արձանագրությունը ստորագրվեց դիմումատուի կողմից:

10. Նույն օրը դիմումատուն տարվեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան, որտեղ դատավոր Ս.-ն քննեց գործը և դիմումատուին մեղավոր ճանաչեց ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածով՝ նրա նկատմամբ նշանակելով 8-օրյա վարչական կալանք: Այս որոշումը բովանդակում էր հետևյալը.

«2004թ. մայիսի 20-ին ժամը 13:15-ի սահմաններում, Արտաշատ քաղաքի Խարազյան փողոցի թիվ 26 շենքի մոտ նույն շենքի բնակիչ [դիմումատուն] բարձրաձայն խոսել ու աղմկել է մի անձանոթ քաղաքացու հետ՝ խանգարելով հասարակական կարգը, որի կապակցությամբ ՈԱՄ վարչության աշխատակիցները փորձել են նրան կարգի հրավիրել, սակայն [դիմումատուն] շարունակել է աղմկել ու զագրախոսել՝ չենթարկվելով [ոստիկանության աշխատակիցների] օրինական պահանջներին:

[Դիմումատուն] հրաժարվեց դատական նիստում բացատրություն տալ:

ՈԱՄ վարչության աշխատակիցներ [Ն.Ս.-ն և Գ. Ն.-ն] հայտնեցին, որ, իրոք, 2004թ. մայիսի 20-ին, ժամը 13:15-ի սահմաններում Արտաշատ քաղաքի Խարազյան փողոցի թիվ 26 շենքի մոտից նույն շենքի բնակիչ [դիմումատուին]

կարգի հրավիրելու ընթացքում վերջինս զազրախոսել է՝ իրենց ասելով . «հերիք է քթներդ մտցնեք ամեն տեղ և յազվայություն անեք» ու այլ անպատիվ խոսքեր [օգտագործելով] չենթարկվելով իրենց օրինական պահանջներին:

Դատարանը գտնում է, որ [դիմումատուն] խախտել է հասարակական կարգը, ինչպես նաև չի ենթարկվել [նստիկանության աշխատակիցների] օրինական պահանջներին, ուստի պետք է նրան վարչական պատասխանատվության ենթարկել»:

11. Դատական նիստի արձանագրության համաձայն՝ նիստը սկսվեց ժամը 16-ն անց 30 րոպեին դիմումատուի և ձերբակալությունն իրականացրած երկու ոստիկանության աշխատակիցների մասնակցությամբ: Դիմումատուն չցանկացավ օգտվել փաստաբանի ծառայությունից և չարեց որևէ միջնորդություն: Դատավորն ընթերցեց վարչական գործի նյութերը: Դիմումատուն հրաժարվեց որևէ հայտարարություն անելուց: Ձերբակալող երկու ոստիկանության աշխատակիցները վկայություն տվեցին՝ կրկնելով իրենց նախկին ցուցմունքերը: Դատավորը հեռացավ խորհրդակցական սենյակ, որից հետո վերադարձավ և հրապարակեց որոշումը:

12. Դիմումատուն առարկեց վերոնշյալ արձանագրության մեջ ներկայացված դատաքննության հանգամանքների դեմ և պնդեց, որ ինքը տարվել է դատավոր Ս.-ի աշխատասենյակ, որտեղ նիստը կայացել է ժամը 15:00-ին: Դիմումատուին չեն թույլատրել օգտվել փաստաբանի ծառայություններից: Նրան թույլ չեն տվել նաև պատշաճ կերպով ծանոթանալ գործի նյութերին, այլ միայն տեղեկացրել են իրեն պաշտոնապես առաջադրված մեղադրանքների մասին: Չնայած իր պահանջներին՝ իրեն չեն թույլատրել որևէ հայտարարություն անել, հարցաքննել ձերբակալությունն իրականացրած երկու ոստիկանության աշխատակիցներին կամ կանչել այլ վկաներ: Նիստն ամբողջությամբ տևել է 10-ից 15 րոպե:

13. Դատական նիստից հետո դիմումատուն տարվեց քրեակատարողական հիմնարկ: Իր պատիժը կրելիս նա որոշեց հացադուլ անել:

14. 2004թ. մայիսի 26-ին քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդություն է ներկայացնում առաջին ատյանի դատարան դիմումատուի կալանքը մեկ այլ վարչական տույժով փոխարինելու խնդրանքով՝ հաշվի առնելով նրա առողջության վատթարացումը:

15. 2004թ. մայիսի 26-ին նույն դատավոր Ս.-ն քննեց միջնորդությունը և որոշեց այն բավարարել մասամբ: Դիմումատուի նկատմամբ կիրառված տույժի տեսակը մեկ այլ պատժով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելով՝ դատավորը պահանջեց ազատ արձակել դիմումատուին և հետաձգել պատժի կատարումը մեկ ամիս ժամանակով:

16. 2004թ. հունիսի 3-ին դիմումատուն արտակարգ բողոք ներկայացրեց ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ

դատարանի նախագահին: Իր բողոքում նա ընդհանուր առմամբ պնդեց, որ առաջին ատյանի դատարանի որոշումը չհիմնավորված և անօրինական է եղել, և կայացվել է դատավարական կանոնների խախտմամբ: Առաջին ատյանի դատարանը չի իրականացրել գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն և դատապարտել է իրեն առանց որևէ համոզիչ ապացույցի՝ հիմնվելով ոստիկանության աշխատակիցների կեղծ ցուցմունքների վրա: Ի հիմնավորումն իր պնդումների՝ դիմումատուն մանրամասն ներկայացրեց 2004թ. մայիսի 20-ի իրադարձությունների իր տեսակետը: Նա պնդեց, որ այս տեսակետը կարող է հաստատվել մի շարք վկաների, ներառյալ իր հարևանների և ընտանիքի անդամների կողմից, որոնց առաջին ատյանի դատարանը չի կանչել և չի հարցաքննել: Վերջապես, նա բողոքեց ոստիկանության կողմից նախկինում ենթադրաբար հետապնդումների ենթարկվելու համար:

17. 2004թ. հունիսի 8-ին վերաքննիչ դատարանի նախագահը, գործի գրավոր նյութերի հիման վրա վերանայեց առաջին ատյանի դատարանի 2004թ. մայիսի 20-ի որոշումը հետևյալ պատճառաբանությամբ՝

«[Դիմումատուն] Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 20.05.2004թ. որոշմամբ ՀՀ ՎԻՎ օր. 182 հոդ. ենթարկվել է վարչական կալանքի 8 օր ժամանակով այն բանի համար, որ 2004թ. մայիսի 20-ին, ժամը 13:00-ի սահմաններում Արտաշատ քաղաքի Խարազյան փող. 26 շենքի մոտ աղմկել է, խախտել հասարակական կարգը և չարամտորեն չի ենթարկվել այդ գործողությունները կանխող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին: Վարչական կալանքի սկիզբը 2004թ. մայիսի 20-ից, ժամը 13:15-ից...»

Դիմելով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ [դիմումատուն] խնդրում է բեկանել [վերոնշյալ որոշումը] և գործը կարճել, նկատի ունենալով, որ ինքը վարչական իրավախախտում չի կատարել:

Ծանոթանալով բողոքին և վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված գործին /զեկուցագրերին, արձանագրություններին/ գտնում եմ, որ բողոքը պետք է մերժել, քանի որ [դիմումատուն] 2004թ. մայիսի 20-ին կատարել է վերը նշված գործողությունները, որի համար բերման է ենթարկվել ոստիկանություն, կազմվել է համապատասխան արձանագրություն և առաջին ատյանի դատարանի որոշմամբ ՀՀ ՎԻՎ օր. 182 հոդ. նա ենթարկվել է վարչական պատասխանատվության»:

18. Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանի նախագահը, դիմումատուի առողջական վիճակը հաշվի առնելով, որոշեց մեղմացնել պատիժը մինչև վեց օր վարչական կալանքի, որը դիմումատուն արդեն կրել էր:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Վարչական վարույթին վերաբերող համապատասխան դրույթների համառոտ նկարագրությունը տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում (թիվ 26986/03, պարբ. 26, 2007թ. նոյեմբերի 15): ՎԻՎՕ-ի համապատասխան դրույթները, որոնք վերոնշյալ վճռում չեն մեջբերվել, և գործել են խնդրո առարկա ժամանակահատվածում, սահմանում են հետևյալը.

### **Հոդված 182. Միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժինիկի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը**

«Հասարակական կարգի պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժինիկի, ինչպես նաև զինծառայողի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև կրկնապատիկը կամ ուղղիչ աշխատանքների նշանակում մեկից մինչև երկու ամիս ժամանակով՝ վաստակի քսան տոկոսի պահումով, իսկ այն դեպքում, երբ ըստ գործի հանգամանքների, հաշվի առնելով խախտողի անձը, այդ միջոցների կիրառումը կհամարվի անբավարար՝ վարչական կալանք մինչև տասնհինգ օր ժամանակով»:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

### I. ՎԵՑԱՄՍՅԱ ԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ 2004թ. ՄԱՅԻՍԻ 20-Ի ՈՐՈՇՄԱՆ ՍԱՍՈՎ

20. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուի գործով վերջնական որոշումը ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից կայացվել է 2004թ. մայիսի 20-ին, հետևաբար, գանգատը ներկայացվել է ժամկետանց:

21. Դիմումատուն պնդեց, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահի 2004թ. հունիսի 8-ի որոշմամբ վերսկսվել է իր գանգատի նկատմամբ վեցամսյա ժամկետի հաշվարկը: Հետևաբար, իր գանգատը ներկայացվել է սահմանված ժամկետի շրջանակներում:

22. Դատարանը նշում է, որ դիմումատուն մի շարք բողոքներ է ներկայացրել կապված 2004թ. մայիսի 20-ին իր դատապարտման հետ: Մասնավորապես, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հիման վրա դիմումատուն պնդեց, որ իր ձերբակալումը և կալանքը եղել են կամայական և անօրինական, ինչպես նաև իրեն չեն տեղեկացրել ձերբակալման պատճառների մասին, ինչպես նաև 5-րդ հոդվածի 4-րդ մասի և 13-րդ հոդվածի հիման վրա, որ հստակ և մատչելի

ընթացակարգ չի եղել իր դատապարտման դեմ բողոքարկելու համար: 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի (բ-դ) ենթակետերի հիման վրա նա պնդեց, որ կողմերի հավասարություն չի եղել, նրան չեն թույլատրել վկաներ կանչել, պաշտպան ունենալ և բավարար ժամանակ և միջոցներ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, որ նա չի տեղեկացվել իրեն առաջադրված մեղադրանքի մասին, դատաքննությունը կարճ է տևել և հրապարակային չի եղել և դատարանը չի պատճառաբանել իր որոշումը: Դիմումատուն այնուհետև պնդեց, որ իր դատապարտումը խախտել է Կոնվենցիայի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներով, ինչպես նաև Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքները:

23. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը կարող է գործը քննության ընդունել, միայն եթե այն ներկայացվել է 6 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը (տե՛ս ի թիվս այլոց *Danov v. Bulgaria*, թիվ 56796/00, պարբ. 56, 2006թ. հոկտեմբերի 26): Այնուամենայնիվ, 35-րդ հոդվածը պահանջում է, որ դիմումատուն հնարավորություն ունենա օգտվել արդյունավետ, բավարար և մատչելի իրավական պաշտպանության ներպետական միջոցներից (տե՛ս ի թիվս այլոց *Sejdovic v. Italy* [ՄԳ], թիվ 56581/00, պարբ. 45, ՄԻԵԴ 2006-III): Եթե դիմումատուն չի ունեցել արդյունավետ իրավական պաշտպանության ներպետական միջոց, ապա վեցամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն օրվանից, երբ գործողությունների դեմ բողոքարկվել է կամ այդ գործողության կամ դրա հետևանքի մասին տեղեկանալու կամ հետևանքը վրա հասնելու կամ դիմումատուին վնաս հասցնելու օրվանից (տե՛ս *Younger v. the United Kingdom* (որոշում), թիվ 57420/00, ՄԻԵԴ 2003-I): Այսպես, վերոնշյալ պահանջները չբավարարող պաշտպանության միջոցների իրացումը հիմք կհանդիսանա «վերջնական որոշման» բացահայտման համար և համապատասխանաբար, վեցամսյա ժամկետի սկզբի հաշվարկման համար (տե՛ս *Prystavska v. Ukraine* (որոշում), թիվ 21287/02, 2002թ. դեկտեմբերի 17):

24. Դատարանը նշում է, որ հետևողականորեն մերժել է այն գանգատները, որոնք դիմումատուները ներկայացրել են վեցամսյա ժամկետում, որը հաշվարկվել է այն օրվանից, երբ կայացվել են որոշումներ, որոնցով մերժվել են վարույթների վերսկսման մասին նրանց խնդրանքները, այն հիմքով որ այդպիսի որոշումները չեն կարող համարվել «վերջնական որոշումներ» Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով (տե՛ս ի թիվս այլոց *Berdzenishvili v. Russia* (որոշում), թիվ 31697/03, ՄԻԵԴ 2004-II; *Riedl-Riedenstein and Others v. Germany* (որոշում), թիվ 48662/99, 2002թ. հունվարի 22; և *Babinsky v. Slovakia* (որոշում), թիվ 35833/97, 2000թ. հունվարի 11): Այնուամենայնիվ, Դատարանը նաև ընդունում է, որ վեցամսյա կանոնից բացառություն կազմում են այն իրավիճակները, երբ



վարույթը վերսկսելու մասին պահանջը բավարարվում է, որը հանգեցնում է վարույթի վերսկսմանը (տե՛ս *Pufler v. France*, թիվ 23949/94, Հանձնաժողովի 1994 մայիսի 18-ի որոշում, Որոշումներ և Հաշվետվություններ 77-Բ, էջ 140; *Korkmaz v. Turkey* (որոշում), թիվ 42576/98, 2006թ. հունվարի 17; և *Atkin v. Turkey*, թիվ. 39977/98, պարբ. 33, 2006թ. փետրվարի 21):

25. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Գատարանը նշում է, որ դիմումատուն իր գանգատում մի շարք բողոքներ է ներկայացրել՝ կապված Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. մայիսի 20-ի որոշման հետ: Այս որոշումն, այնուամենայնիվ, վերջնական է եղել և չեն եղել հետագա բավարար մատչելի և արդյունավետ պաշտպանության միջոցներ դրանք սպառելու համար, ներառյալ արտակարգ պաշտպանության միջոցները՝ ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածի ներքո դատախազին կամ վերադաս դատարանի նախագահին բողոքարկումը (տե՛ս *Գալստյանի գործը*, վկայակոչված վերևում, պարբ. 40-42): Դիմումատուն, այնուամենայնիվ, փորձել է վերանայման այս ուղիներից մեկը՝ ներկայացնելով բողոք ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին: 2004թ. հունիսի 8-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա որոշեց վերանայել Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. մայիսի 20-ի վերջնական որոշումը: Դիմումատուն իր գանգատը Գատարան է ներկայացրել 2004թ. դեկտեմբերի 7-ին, ինչը 6 ամսից ավել է՝ առաջին ատյանի դատարանի որոշման օրվանից հաշվելու դեպքում, բայց պակաս է 6 ամսից՝ վերաքննիչ դատարանի որոշման օրվանից հաշվելու դեպքում: Հետևաբար, անհրաժեշտ է որոշել, թե դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա կայացրած ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը վերսկսել է արդյոք վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը, որքանով դա վերաբերում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշմանը:

26. Գատարանը նշում է, որ նմանատիպ իրավիճակ արդեն քննել է Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված մի շարք գործերով, որոնցով եզրակացրել է, որ վարույթի վերաբացման փաստն ինքնին վեցամսյա ժամկետի հաշվարկի վերսկսման հիմք չի կարող հանդիսանալ: Այն դեպքերում, երբ վարույթն վերսկսվել է կամ վերջնական որոշումը վերանայվել է, վարույթի սկիզբ առնելու կամ վերջնական որոշման նկատմամբ վեցամսյա ժամկետի հաշվարկը կընդհատվի միայն Կոնվենցիայի այն հարցերի առնչությամբ, որոնք հիմք են հանդիսացել նման վերանայման կամ գործի վերսկսման համար և քննարկման առարկա են հանդիսացել արտակարգ բողոքը քննող մարմնի առջև (տե՛ս *Սափեյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 35738/03, պարբ. 24, 2009թ. հունվարի 13; *Ամիրյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 31553/03, պարբ. 22, 2009թ. հունվարի 13; և

*Գասպարյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ. 1), թիվ 35944/03, պարբ. 31, 2009թ. հունվարի 13):

27. Սույն գործում Դատարանը նշում է, որ դիմումատուն վերաքննիչ դատարանին ուղղված արտակարգ բողոքում ուղղակիորեն կամ ըստ էության չի բարձրացրել Դատարանին 2004թ. մայիսի 20-ի որոշման վերաբերյալ ներկայացրած գանգատներից և ոչ մեկը (տե՛ս վերը պարբ. 16 և 22): Դատարանն այնուհետև նշում է, որ վերաքննիչ դատարանն ևս իր սեփական նախաձեռնությամբ չի անդրադարձել այդ հարցերից որևէ մեկին, այլ միայն անփոփոխ է թողել դիմումատուի՝ ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածով դատապարտումը և պակասեցրել է առաջին ատյանի դատարանի կողմից սահմանված տույժի չափը: Այսպիսով, դիմումատուի կողմից Դատարանին ներկայացված առաջին ատյանի դատարանի որոշմանը վերաբերող բողոքները չեն քննվել վերաքննիչ դատարանի կողմից, և այն հիմքերը, որոնցով առաջնորդվելով՝ վերաքննիչ դատարանը որոշել է վերանայել առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը, չեն կարող համարվել այդ բողոքների հետ որևէ կերպ առնչվող: Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման վերանայումը դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա չի վերսկսում վեցամսյա ժամկետի հաշվարկը այդ բողոքների մասով (տե՛ս, *mutatis mutandis*, *Ամիրյան և Գասպարյան*, վկայակոչված վերևում):

28. Այստեղից հետևում է, որ 2004թ. մայիսի 20-ի որոշման վերաբերյալ դիմումատուի բողոքները ներկայացված են ժամկետանց և պետք է մերժվեն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ 2004Թ. ՀՈՒՆԻՄԻ 8-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍՈՎ

29. Դիմումատուն բողոքեց ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավարության կապակցությամբ և վկայակոչեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, որը համապատասխանաբար սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք... իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմից ... արդարացի... դատաքննության իրավունք»:

## Ա. Ընդունելիությունը

### 1. 6-րդ հոդվածի կիրառելիությունը

30. Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է այն վարույթների նկատմամբ, երբ անձը մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ մինչև մեղադրանքի վերջնական հաստատումը: Դատարանն այնուհետև հիշեցնում է, որ 6-րդ հոդվածը չի կիրառվում գործի վարույթը վերսկսելու մասին միջնորդությունը մերժելուն վերաբերող դատավարության նկատմամբ: Միայն գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելուց հետո հարուցած նոր վարույթները կարող են դիտարկվել որպես քրեական մեղադրանքի առաջադրում (տե՛ս *Vanyan v. Russia*, թիվ 53203/99, պարբ. 56, 2005թ. դեկտեմբերի 15):

31. Դատարանը նշում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը քննել է ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. մայիսի 20-ի որոշման դեմ բերված դիմումատուի արտակարգ բողոքը: Այդպիսով նախագահը վերանայել է դիմումատուի գործը, նրա դատապարտումը թողել է անփոփոխ և նշանակել է նոր պատժատեսակ:

32. Վերոնշյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահի քննած վարույթը վերաբերում է դիմումատուի նկատմամբ քրեական մեղադրանք ներկայացնելուն: Դատարանը գտնում է և կողմերը չեն վիճարկել, որ Կոնվենցիայի 6-1 հոդվածը քրեական մասով կիրառվում է այդ վարույթի նկատմամբ:

### 2. Նյութական իրավունքի հարցեր

33. Կառավարությունը պնդեց, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում դատավարությունը համապատասխանել է 6-րդ հոդվածի պահանջներին:

34. Դիմումատուն պնդեց, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը չի կայացրել պատճառաբանված որոշում: Ավելին, բողոքարկման համար սահմանված չի եղել պարզ ընթացակարգ, որի պատճառով ինքը զրկված է եղել այդ դատարանի արդյունավետ մատչելիության իրավունքից: Ի վերջո, դիմումատուն կամ իր փաստաբանները պատշաճ կերպով չեն ծանուցվել նիստի մասին և, որպես հետևանք, բողոքը քննվել է իրենց բացակայությամբ:

#### (ա) Պատճառաբանված վճռի իրավունք

35. Դատարանը հիշեցնում է, որ արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքը արտացոլող Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանների և տրիբունալների վճիռները պետք է պատշաճ կերպով մանրամասնեն այն պատճառները, որոնց

վրա դրանք հիմնված են: Այն չափը, որի շրջանակներում պատճառաբանություն տալու այս պարտականությունը կիրառվում է, կարող է տարբերվել՝ կախված որոշման բնույթից, և դա պետք է որոշվի կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո: Չնայած 6-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է դատարաններին պատճառաբանել իրենց որոշումները, այնուամենայնիվ, այն չի կարող մեկնաբանվել որպես յուրաքանչյուր փաստարկ մանրամասնելու պահանջ: Այսպիսով, որևէ բողոք մերժելու համար վերաքննիչ դատարանը կարող է, ըստ էության, պարզապես վերահաստատել ստորադաս դատարանի որոշման մեջ բովանդակվող հիմքերը (տե՛ս *García Ruiz v. Spain* [ՄՊ], թիվ 30544/96, պարբ. 26, ՄԻԵԴ 1999-I, և *Hirvisaari v. Finland*, թիվ 49684/99, պարբ. 30, 2001թ. սեպտեմբերի 27):

36. Սույն գործում դիմումատուն դատապարտվել է ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածով՝ ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին չենթարկվելու և զազրախոսելու համար: Այս պատճառը, ներառյալ հիմնական փաստերը, ընկած են ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. մայիսի 20-ի որոշման հիմքում: Վերաքննիչ դատարանն իր 2004թ. հունիսի 8-ի որոշմամբ վերահաստատեց առաջին ատյանի դատարանի որոշումը և այն թողեց անփոփոխ: Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ վերաքննիչ դատարանը որպես հիմք է ընդունել առաջին ատյանի դատարանում հաստատված հանգամանքները, չի նշանակում, որ նրա որոշումը պատճառաբանված չի եղել:

37. Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն:

**(բ) Դատարանի մատչելիության իրավունք**

38. Դատարանը գտնում է, որ սույն գանգատն, ըստ էության, հանդիսանում է ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բողոքարկման ընթացակարգի հստակության և մատչելիության բացակայությանը վերաբերող գանգատի կրկնություն: Դիմումատուն սույն գանգատը ներկայացնելիս, այնուամենայնիվ, չի պահպանել վեցամսյա ժամկետի կանոնը (տե՛ս պարբ. 27 վերևում):

39. Հետևաբար, գանգատի այս մասը նմանապես ներկայացվել է ժամկետանց և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն:

**(գ) Բանավոր դատաքննության իրավունք**

40. Ի վերջո, դիմումատուն բողոքեց, որ ինքը կամ իր պաշտպանը պատշաճ կերպով չեն ծանուցվել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում դատական նիստի մասին և այդպիսով նա զրկված է եղել դատարանում իր գործի քննությանը

ներկա գտնվելու հնարավորությունից: Դատարանը նշում է, որ, այնուամենայնիվ, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա չի անցկացրել բանավոր դատաքննություն, այլ այն քննել է գրավոր փաստաթղթերի հիման վրա (տե՛ս վերը պարբ. 17): Հետևաբար, դիմումատուի գանգատն, ըստ էության, վերաբերում է դատարանում բանավոր դատաքննության բացակայությանը:

41. Դատարանը գտնում է, որ սույն գանգատն ակնհայտ անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ որևէ այլ հիմքով այն անընդունելի չէ: Հետևաբար, այն ընդունելի պետք է ճանաչվի:

### Բ. Գործի ըստ էության քննությունը

42. Դատարանը հիշեցնում է, որ բանավոր և հրապարակային դատաքննությունը հանդիսանում է 6-րդ հոդվածի 1-ին մասում բովանդակվող հիմնարար սկզբունք: Այս սկզբունքը, մասնավորապես, կարևոր է քրեական ենթատեքստում, որն ենթադրում է, որ սովորաբար պետք է լինի առաջին ատյանի դատարան, որն ամբողջովին կբավարարի 6-րդ հոդվածի պահանջներին և որտեղ դիմումատուն կունենա իր գործը «քննելու» իրավունք, *inter alia* իր օգտին ցուցմունքներ տալու, իր դեմ առկա ապացույցները լսելու, ինչպես նաև վկաներին հարցաքննելու և խաչաձև հարցաքննելու հնարավորությամբ (տե՛ս *Jussila v. Finland* [ՄՊ], թիվ 73053/01, պարբ. 40, ՍԻԵԴ 2006-...):

43. Այնուամենայնիվ, պաշտպանյալի անձնական ներկայությունը նույն կարևորությունը չունի վերաքննիչ վարույթի դեպքում (տե՛ս *Belziuk v. Poland*, 1998թ. մարտի 25, պարբ. 37, *Վճիռների և Որոշումների Ժողովածու* 1998-II): Վերաքննիչ դատարանում վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառումը կախված է ընթացող դատավարության առանձնահատկություններից. պետք է հաշվի առնել ներպետական իրավական համակարգի գործունեության ամբողջությունը և վերաքննիչ դատարանի դերը այդտեղ: «Հրապարակային դատաքննության» բացակայությունը երկրորդ և երրորդ ատյանների դատարաններում կարող է արդարացվել կոնկրետ վարույթի առանձնահատկություններով պայմանավորված, պայմանով, որ առաջին ատյանի դատարանում անցկացվել է հրապարակային դատաքննություն: Այսպիսով, վերաքննիչ և միայն իրավունքի հարցերին վերաբերող դատավարությունը, ի տարբերություն փաստի հարցերին առնչվող դատավարության, կարող է համապատասխանել 6-րդ հոդվածի պահանջներին, նույնիսկ եթե դիմումատուին հնարավորություն չի ընձեռնվել անձամբ հանդես գալու

վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (տե՛ս *Ekbatani v. Sweden*, 1988թ. մայիսի 26, պարբ. 27 և 31, Սերիա Ա թիվ 134):

44. Այնուհետև, նույնիսկ եթե վերաքննիչ դատարանն ունի լրիվ իրավագործություն գործը քննելու և՛ իրավունքի, և՛ փաստի հարցերով, 6-րդ հոդվածը ոչ միշտ է ենթադրում հրապարակային դատաքննության և անձամբ ներկա գտնվելու իրավունք: Պետք է հաշվի առնել, թե ինչ բնույթի հարցեր են քննարկվելու վերաքննիչ դատարանի կողմից (տե՛ս *Helmers v. Sweden*, 1991թ. հոկտեմբերի 29, պարբ. 36, Սերիա Ա թիվ 212-Ա; *Kremzow v. Austria*, 1993թ. սեպտեմբերի 21, պարբ. 58, Սերիա Ա թիվ 268-Բ; *Belziuk*, վկայակոչված վերևում, պարբ. 37; և *Jussila*, վկայակոչված վերևում, պարբ. 42): Էական նշանակություն կարող է ունենալ նաև այն, թե բողոքարկողի համար ինչ բնույթի հարց է որոշվում (տե՛ս *Helmers*, վկայակոչված վերևում, պարբ. 38, և *Botten v. Norway*, 1996թ. փետրվարի 19, պարբ. 51-52, *Վճիռների և Որոշումների Ժողովածու* 1996-Ի):

45. Սույն գործում ՎԻՎՕ-ի համապատասխան դրույթներից հստակ չի երևում, թե արդյոք ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահի իրավագործությունը սահմանափակված էր միայն իրավունքի հարցերով, թե ընդգրկում էր նաև փաստի հարցերը (տե՛ս, մասնավորապես, ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածը, որը նշված է վերը վկայակոչված *Գայստյանի գործով* վճռում): Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանի նախագահի 2004թ. հունիսի 8-ի որոշման բովանդակությունից, մասնավորապես այն եզրահանգումից, որ «[դիմումատուն] կատարել է վերը նշված գործողությունները», բխում է, որ վերաքննիչ դատարանի նախագահն իրավասու էր քննելու ոչ միայն իրավունքի, այլ նաև փաստի հարցեր: Բացի այդ, նախագահն իրավասու էր կատարելու դիմումատուի մեղքի կամ անմեղության լրիվ գնահատում և նշանակել պատիժ, ինչը նա արել է գործի գրավոր նյութերի հիման վրա:

46. Դատարանը գտնում է, որ այս առումով սույն գործի հանգամանքները նման են վերոնշյալ *Ekbatani* գործի հանգամանքներին, որի պարագայում Դատարանը պետք է քններ, թե ինչպես է «հրապարակային դատաքննության» պահանջը գործում վերաքննիչ վարույթում և՛ իրավունքի, և՛ փաստի հարցերով քննություն կատարելու իրավագործություն ունեցող դատարանի առջև: Դիմումատուն այդ գործում հերքել էր այն փաստերը, որոնց վրա հիմնված է եղել իր դեմ մեղադրանքը: Այնուամենայնիվ, նա դատապարտվել էր առաջին ատյանի դատարանի կողմից տուժողի տված ցուցմունքների հիման վրա: Վերաքննիչ դատարանի համար այդպիսով որոշիչ նշանակություն է ունեցել ներգրավված երկու անձանց արժանահավատությունը: Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանը, առանց հրապարակային դատաքննություն անցկացնելու, որոշել է հաստատել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, որը

ճանաչվեց 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում (տե՛ս *Ekbatani*, վկայակոչված վերևում, պարբ. 32 և 33):

47. Սույն գործում դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել ոստիկանության երկու աշխատակիցների տված ցուցմունքների վրա, ովքեր հանդես են եկել որպես գործով հիմնական և միակ վկաներ: Դիմումատուն իր արտակարգ բողոքում մանրամասն հերքել է իրադարձությունների զարգացման՝ վերոնշյալ ոստիկանության աշխատակիցների տարբերակը: Այնուամենայնիվ, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահն անփոփոխ է թողել դիմումատուի դատապարտումն՝ առանց նրան և վերոնշյալ ոստիկանության աշխատակիցներին հարցաքննելու: Դատարանը գտնում է, որ գործի որոշակի հանգամանքներում դիմումատուի մեղավորությունը կամ անմեղությունը չէր կարող, որպես արդար դատաքննության հարց, պատշաճ կերպով որոշվել առանց դիմումատուի և նշված երկու ոստիկանության աշխատակիցների անձամբ տված ցուցմունքների ուղղակի գնահատման:

48. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

49. Ի վերջո, դիմումատուն Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների հիման վրա բողոքեց, որ 2003թ.-ից մինչև իր դատապարտումն ընկած ժամանակահատվածում նա իր քաղաքական գործունեության համար իշխանությունների կողմից ենթարկվել է շարունակական հետապնդումների՝ ոստիկանության կողմից իր տուն հաճախակի այցելությունների, իր ընտրական զեկույցի հրապարակմանը խոչընդոտելու և իր որդուն վարչական տուգանքի ենթարկելու տեսքով:

50. Հաշվի առնելով իր տրամադրության տակ առկա բոլոր նյութերը և որքանով սույն գանգատները գտնվում են իր իրավասության ներքո, Դատարանը գտնում է, որ դրանք չեն վերհանում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով նախատեսված իրավունքների և ազատությունների խախտման որևէ դրսևորում: Հետևաբար, գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

51. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

## Ա. ՎՆԱՍԸ

52. Դիմումատուն պահանջեց 10,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

53. Կառավարությունը նշեց, որ, եթե Դատարանը գտնի, որ տեղի է ունեցել դիմումատուի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտում, պահանջված գումարը չափազանցված է:

54. Դատարանը գտնում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս Կոնվենցիայի խախտման հետևանքով, որը հաստատվել է սույն վճռով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 1,200 եվրո փոխհատուցում:

## Բ. Ծախսեր և ծախքեր

55. Դիմումատուն նաև պահանջեց 2,850 ԱՄՆ դոլար և 4,123.73 ֆունտ ստերլինգ (ՄԲՖ) Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցման համար: Դիմումատուն ներկայացրեց ժամանակացույցեր, որտեղ մանրամասն նկարագրված էին իր ներպետական փաստաբանի և KHRP-ի երեք փաստաբանների մատուցած ծառայությունների յուրաքանչյուր ժամի դրույքաչափերը:

56. Կառավարությունը պնդեց, որ այս պահանջները պատշաճ փաստաթղթային հիմնավորում չունեն:

57. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուին տրամադրվում է ծախսերի և ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքում, եթե ցույց է տրվում, որ այդպիսիք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ են: Սույն գործում Դատարանը նախևառաջ նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել որևէ վճարման անդորրագիր կամ ժամանակացույց՝ հիմնավորելու համար այն վարձավճարները, որ ենթադրաբար տրվել են Միացյալ Թագավորությունում գործող փաստաբաններին: Ինչ վերաբերում է KHRP-ի երեք փաստաբաններին, ապա Դատարանը գտնում է, որ այս փաստաբաններից միայն մեկը, տկն. Լ. Զլարիջն է նշվել դիմումատուի ներկայացուցիչների շարքում, իսկ մյուս երկու փաստաբանների համար Դատարանին որևէ լիազորագիր չի ներկայացվել (տե՛ս վերը պարբ. 2): Դատարանը, հետևաբար, մերժում է վերոնշյալ փաստաբանների կապակցությամբ ներկայացված պահանջները:



58. Գատարանն այնուհետև հիշեցնում է, որ դատական ծախսերը փոխհատուցվում են միայն այնքանով, որքանով դրանք վերաբերում են ճանաչված խախտումներին (տե՛ս *Beyeler v. Italy* [ՄՊ], թիվ 33202/96, պարբ. 27, ՄԻԵԴ 2000-1): Գատարանը նշում է, որ սույն գործում միայն 6-րդ հոդվածի խախտում է ճանաչվել մեկ կետով, մինչդեռ գրավոր փաստաթղթերի ամբողջությունը, ներառյալ սկզբնական գանգատը և դրան հաջորդող առարկությունները, վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից Թիվ 1 Արձանագրության բազմաթիվ հոդվածների: Հետևաբար, պահանջը լրիվ չի կարող բավարարվել և զգալի նվազեցում պետք է կատարվի: Արդարացիության սկզբունքին համապատասխան՝ Գատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 1,000 եվրո՝ կատարած ծախսերի և ծախքերի համար, որը պետք է վճարվի ֆունտ ստերլինգով և փոխանցվի Միացյալ Թագավորությունում դիմումատուի ներկայացուցիչների բանկային հաշվին:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

59. Գատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

#### **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԳԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՉԱՅՆ**

1. *Հայտարարում է* ընդունելի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում բանավոր դատաքննություն չանցկացնելուն վերաբերող գանգատը, և անընդունելի գանգատի մնացած մասը;
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում;
3. *Վճռում է, որ*
  - (ա) պատասխանող պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.
    - (i) 1,200 (հազար երկու հարյուր) եվրո, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ

գործող փոխարժեքով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,

(ii) 1,000 (հազար) եվրո, գումարած նշված գումարի վրա դիմումատուի նկատմամբ հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով Միացյալ Թագավորությունում ներկայացուցիչների բանկային հաշվին

(բ) վերը նշված եռամսյա ժամկետից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս;

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2009թ. հոկտեմբերի 27-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Stanley Naismith  
Քարտուղարի տեղակալ

Josep Casadevall  
Նախագահ